

ԳՐԻԳՈՐ ՕՇԱԿԱՆՑԻՆԻ ՏԱՂԵՐԻ ԼԵԶՈՒՆ ԵՒ ՈՃԸ¹

Գրիգոր արք. Օշականցին ժԸ. դարի տաղերգու է, ծնվել է 1757 թ. Օշականում: Նրա կենսագրությունն ամբողջությամբ մեզ է ներկայացնում տաղասաց, մանկավարժ Հովհաննես Կարնեցին², որն Օշականցու ժամանակակիցն էր եւ անձամբ ճանաչել է նրան:

Յոթ տարեկանից Օշականցին³ սկսում է ուսումնառությունն Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Ա. Երեւանցու՝ էջմիածնում հիմնած ժառանգավորաց դպրոցում: Խելացի եւ ուշիմ պատանին արժանանում է կաթողիկոսի ուշադրությանը եւ ընդունվում է հոգեւոր ծառայության: Ղուկաս Ա. Կարնեցի կաթողիկոսը նրան շնորհում է արքուիսյան պատիվ եւ ուղարկում Արեւմտյան Հայաստանի տարբեր վայրեր՝ որպես հայրապետական նվիրակ: 1795–1799 թթ. Գրիգոր արք. Օշականցին շրջում է ինչպես Արեւմտյան Հայաստանի (Կարին, Մուշ, Բասեն), այնպես էլ Օսմանյան կայսրության հայաբնակ այլ գավառներում (մասնավորապես Պոնտոս): Նա Արեւմտյան Հայաստանի տարբեր գավառներում եւ քաղաքներում ոչ միայն կատարում է նվիրակի իր առաքելությունը, այլեւ այցելում է նշանավոր վանքերն ու եկեղեցիները, բերդերն ու ամրոցները, որոնց մասին գրառումներ է կատարում: Պահպանվել են եկեղեցիների պատերին թողած նրա արձանագրություններից⁴:

Գրիգոր Օշականցին շրջագայություններից մեկի ընթացքում՝ 1799 թ. դեկտեմբերին, էրզրումի նահանգի Հերթ գյուղում վարակվում է ժանտախտով, վերադառնում է Կարին, որտեղ էլ 43 տարեկան

^{1*} Ստացվել է՝ 8.12.2023, գրախոսվել է՝ 23.12.2023:

էլ. հասցե՝ astghikhovhannisyanyan90@gmail.com:

² Վիեննայի մատենադարան, ձեռ. 884, 92ա–97բ:

³ Ավագանի անունը որեւէ տեղ հիշատակված չէ:

⁴ Վիեննայի մատենադարան, ձեռ. 884, 92ա–97բ:

հասակում կնքում է իր մահկանացուն: Զգալով իր մոտալուտ մահը՝ Օշականցին Հովհաննես Կարնեցուն խնդրում է գրել իր կտակը, ապա նրան է հանձնում իր ստեղծագործությունները եւ ձեռագրերը: Կարնեցին ի մի է բերում դրանք եւ կազմում երեք մասից բաղկացած մեկ ընդհանուր ձեռագիր (տաղեր, ոտանավոր արձանագրություններ եւ տեսիլներ)⁵:

Գրիգոր Օշականցու տաղերը հրատարակել է Համազասպ Ոսկյանը⁶: Տաղերգակի կյանքին ու ստեղծագործությանն անդրադարձել է Շուշանիկ Նազարյանն իր «Գ. Օշականացու կյանքն ու ստեղծագործությունը» հոդվածում⁷, որտեղ մանրակրկիտ վերլուծության է ենթարկել հեղինակի տաղերը:

Սակայն Օշականցու ստեղծագործություններին նվիրված աշխատանքներում բացակայում են լեզվական ուսումնասիրությունները, եւ քանի որ գեղարվեստական ստեղծագործության հիմքում ընկած է լեզուն, ապա գեղարվեստական երկի համակողմանի ուսումնասիրությունը չի կարող չընդգրկել նաեւ լեզվի ուսումնասիրությունը: Այս հոդվածով կփորձենք լրացնել այդ բացթողումը:

Գրիգոր Օշականցու ստեղծագործության արժեքավոր մասն է կազմում «Տաղարան վայելուչ եւ գեղեցիկ» ժողովածուն⁸: Այն ներառում է մոտ երկու տասնյակ տաղ, որոնց հիմնական նյութը հայրենի բնության գովերգումն ու փառաբանումն է՝ արված պարզ ու մատչելի նկարագրություններով:

Օշականցին ստեղծագործել է մի ժամանակահատվածում, երբ գրավոր բանաստեղծության մեջ իշխող է դառնում գրաբարը: Ինչպես նկատում է Վարդան Աճեմյանը, «18-րդ դարում գրաբարի դիրքերը զգալիորեն ամրապնդվում են», եւ «արեւմտահայ աշխարհաբարը 18-րդ դարում միայն երկրորդական գրավոր լեզու է, եւ առաջնությունը այս տեսակետից պատկանում է գրաբարին»⁹: Գրաբարի վերականգնման, զար-

⁵ Շ. ՆԱԶԱՐՅԱՆ, Գրիգոր Օշականցու կյանքն ու ստեղծագործությունը, Երեւան, «Պատմաբանասիրական հանդես», № 4, 1964, էջ 103–104:

⁶ Հ. ՈՍԿԵԱՆ, Գրիգոր Արքեպ. Օշականցի, Վիեննա, «Հանդէս Ամսօրեայ», № 1–3, 1964, էջ 7–28, 4–6, էջ 141–152, 7–9, էջ 311–322, Հ. ՈՍԿԵԱՆ, Չորս հայ տաղասացներ եւ անոնց տաղերը, Վիեննա, 1966: Սույն գրքին հղումներն այսուհետ կտրվեն շարադրանքում:

⁷ Շ. ՆԱԶԱՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 101–116:

⁸ Շ. ՆԱԶԱՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 103–104:

⁹ Վ. ԱՃԵՄՅԱՆ, Գրական արեւմտահայերենի ձեւավորումը, Երեւան, 1971, էջ 22, 23–24:

գացման այս բուռն շրջանում են ստեղծագործել ԺՀ. դարի նշանավոր բանաստեղծներ Պաղտասար Դպիրը, Պետրոս Ղափանցին, Հովհաննես Կարնեցին, Գրիգոր Օշականցին եւ այլք, սակայն այս բանաստեղծները, հին հայերենին հավատարիմ մնալով հանդերձ, ձգտել են դյուրին ու մատչելի դարձնել այն, իսկ շարահյուսությունն այն աստիճանի պարզեցնել, որ հնարավորինս հասկանալի դառնա:

Շարունակելով գրաբարամետ բանաստեղծների ավանդույթները՝ Օշականցին նույնպես հակվում է դեպի դասականությունը եւ որպես գեղարվեստական արտահայտման միջոց՝ ընտրում է գրաբար: Այդ շրջանում դեռեւս նոր ձեւավորվող եւ ոչ կանոնական աշխարհաբարը չէր կարող մրցել գրաբարի հետ, սակայն աշխարհաբարի՝ հատկապես արեւելահայ լեզվատարների առկայությունը գրաբար ստեղծագործությունների մեջ անխուսափելի էր:

Այսպիսով՝ Գրիգոր Օշականցու ստեղծագործության լեզվական առանձնահատկությունների բացահայտումը կատարել ենք մի շարք հիմնական ուղղություններով, համեմատականներ ենք անցկացրել ԺՀ. դարի բանաստեղծներ Պաղտասար Դպիրի, Պետրոս Ղափանցու եւ Հովհաննես Կարնեցու ստեղծագործությունների հետ՝ բացահայտելու համար, թե այս բանաստեղծներից ովքեր են առավել հակված դեպի առաջադեմ բանաստեղծության միտումը՝ դեպի մատչելի գրաբարը: Այսպես.

1) Բառապաշարը: Օշականցու ստեղծագործությունների հիմնական բառամթերքը գրաբարյան է, թե՛ տաղերում, թե՛ արձանագրություններում գրաբարյան բառերի հնչունապատկերի եւ գրության փոփոխություններ չկան, ուղղագրությունը դասական է, ինչպես՝ վարդագոյն, նոյն, տէր, սէր, յաւէտ, յոյժ, լցայ, լուայ, արշաւեցայ, պարտէզ (Ոսկեան, էջ 76, 77, 81, 89) եւ այլն:

Ստեղծագործություններում բացակայում է ձայնավորների մենաբարբառության աշխարհաբարյան միտումը. երկբարբառների, եռաբարբառների պարզեցումը, վերածումը երկհնչունների, ինչը բնորոշ է տվյալ ժամանակահատվածին. լոյս, սիւն, արիւն, հոգւոյս, գմբէտեայ, թակոյկ, սիրելոյն (Ոսկեան, էջ 76, 77, 93, 105, 111, 129) եւ այլն:

Գրաբարի միջոցով ավանդված բնիկ հայերեն բառապաշարից բացի՝ Օշականցին գործածում է գրաբարի քերականությանը բնորոշ մի շարք իրողություններ: Այսպես՝

ա) *Խստորեն պահպանված է գրաբարյան նախդիրների գործածությունը, իսկ կապերի կիրառության օրինակներ ընդհանրապես չկան. «Ունայն ընդ վայր կենցաղս լեալ...»¹⁰ (Ոսկեան, էջ 115), «զօրն ողջոյն, զգիշերն ողջոյն...» (Ոսկեան, էջ 97): Նշենք, որ գրաբարյան նախդիրների փոխակերպումը կապերի, աշխարհաբարի ձեւավորման կարեւոր երեւույթներից է, ինչը բացակայում է Օշականցու ստեղծագործության մեջ:*

բ) *Խոնարհման համակարգում լիովին պահպանվել է գրաբարի կազմությունը՝ բացառությամբ աշխարհաբարյան հարակատար դերբայի անկախ գործածության մեկ օրինակի. «Եւ քայքայի կերտուած մարմնոյս գեղեցիկ» (Ոսկեան, էջ 105): Ի հակադրություն Օշականցու՝ հարակատար դերբայի անկախ եւ օժանդակ բայով գործածության դեպքերը բավականին շատ են հանդիպում Պետրոս Ղափանցու (շաղամած, վառած եմ, ողորմած է)¹¹, Պաղտասար Դպիրի (հատած, գըտած, տաւած է, մեծուցած, սընուցած)¹², Հովհաննես Կարնեցու (ոլորած, բոլորած, բացւած, մոլորած եմ)¹³ սիրո եւ բնությանը նվիրված տաղերում: Իսկ ահա Պետրոս Ղափանցիի գործածում է նաեւ եւ վերջավորությամբ վաղակատար դերբայներ, ինչպես՝ դարձեւ եմ, բարձեւ եմ, վարձեւ եմ, ցողեւ եմ¹⁴: Ավելին. Հովհաննես Դպիրի եւ Պետրոս Ղափանցու տաղերում հանդիպում են կու նախադաս մասնիկով ներկայի եւ անցյալի կազմության մի քանի օրինակներ, ինչպես՝ կու գաւ¹⁵, կու գընամ, կու պըտըտիմ, կու բոլորի¹⁶: Հայտնի է, որ կու մասնիկը համարվում է գրաբար եւ աշխարհաբար լեզուների տարբերակման հիմնական սահմանանիշներից մեկը, եւ ինչպես գրում Հր. Աճառյանը. «Մի գրաբար գրվածք, որ ունի կու մասնիկը, արդեն գրաբար չէ»¹⁷: Պաղտասար Դպիրի տաղերում հանդիպում ենք նաեւ վ կրավորական ածանցի գործածության մեկ օրինակի՝ բացվի¹⁸: Վ մասնիկով կրավորականի գործածումը եւս աշխարհաբարը գրաբարից զատող հիմնական գործոններից մեկն է:*

¹⁰ Անդ, էջ 115:

¹¹ Շ. ՆԱԶԱՐՅԱՆ, Պետրոս Ղափանցի, Երեւան, 1969, էջ 245, 279, 301:

¹² ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, Տաղիկներ սիրոյ եւ կարօտանաց, Երեւան, 1958, էջ 72, 101, 116, 181:

¹³ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՅԻ, Տաղարան, Երեւան, 1962, էջ 68, 69:

¹⁴ Շ. ՆԱԶԱՐՅԱՆ, նշ. աշխ., էջ 285–286:

¹⁵ Անդ, էջ 243:

¹⁶ ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, նշ. աշխ., էջ 75, 90:

¹⁷ Հր. ԱՃԱՌՅԱՆ, Հայոց լեզվի պատմություն, մաս II, Երեւան, 1951, էջ 443:

¹⁸ ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, նշ. աշխ., էջ 83:

Հրամայականի կազմությունը՝ է, էք վերջավորություններով, ընդամենը մեկ օրինակով է տեղ գտել Գ. Օշականցու տաղերում՝ հանել (Ոսկեան, էջ 116), իսկ ահա Հովհաննես Կարնեցու տաղերում օրինակները բազմաթիվ են, ինչպես՝ այրէ, մատուցե՛ք, ծանուցե՛ք, տեսանիցե՛ք¹⁹ եւ այլն: Հովհաննես Կարնեցու տաղերում հանդիպում ենք նաեւ Ի-ով արգելական հրամայականի գործածության մի քանի օրինակի, ինչպես՝ մի առնե՛ր, մի հագնի՛ր, մի փախչի՛ր²⁰:

Գրիգոր Օշականցու տաղերում գրաբարյան բայերի ժխտական խոնարհումը եւս պահպանված է. «Կալ ընդ նոսա ոչ հեղգացա» (Ոսկեան, էջ 84), «Աղիողորմ լալով մաղթեմ ոչ լսէ» (Ոսկեան, էջ 105) եւ այլն, աշխարհաբարյան չ ձեւով թով օրինակներ չեն հանդիպում, այնինչ տվյալ ժամանակահատվածի գրաբար ստեղծագործություններում չ-ով ժխտականի գործածությունը սովորական բնույթ է կրում, ինչպես՝ չկար, չունիս²¹, չըգիտէ, չըտան²², չտեսցէ, չառնէ²³:

Բացի բնիկ հայերեն բառերից՝ Օշականցին գործածում է մի շարք փոխառություններ, օրինակ՝ ասորերեն՝ թարսիս, շափիւղայ, քանֆար, սաբայ, գուր, լումայ, հունարեն՝ մարգարիտ, լիբանոս, սիդոն, եբրայերեն՝ րաբբունի, մեսիա, եդեմ, գեհեն, պահլավերեն՝ տաշտ, գուսան, պայագատ, կնդուկ, թակոյկ, աւամ, մարգարէ, պարտեզ, պարսկերեն՝ խունկ, պիլպիլ, սմբուլ, դաստայ (Ոսկեան, էջ 88, 89, 102, 103, 106, 76, 89, 103, 78, 83, 103, 88, 111, 112, 113, 114, 122, 89, 90, 119):

Միջինհայերենյան բառերն ընդամենը մի քանիսն են՝ անփատակ, ծիծաղեռես, ողորմասիրտ, աղիւշէն (Ոսկեան, էջ 89, 112, 113), խոսակցական-բարբառային բառեր ընդհանրապես չեն հանդիպում: Օշականցին հավատարիմ է մնում իր ոճին՝ ձգտելով անաղարտ պահել գրաբարը: Ընդհանրապես այս շրջանի գրաբար ստեղծագործություններում հազվադեպ են հանդիպում խոսակցական-բարբառային բառեր՝ բացառությամբ Հովհաննես Կարնեցու տաղերի: Վերջինս, խառնվածքով առավել մոտ լինելով աշուղական բանարվեստին, հաճախ է գործածում դրանք, ինչպես՝ ուստ չեկայ, ժոխտոած, ժոտ գայ, հասրաթ, չամչախ, դուրան, զալըմ, խիշտ, թափ եւ այլն²⁴:

¹⁹ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՑԻ, նշ. աշխ., էջ 110, 117:

²⁰ Անդ, էջ 124:

²¹ Շ. ՆԱԶԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 325, 329:

²² ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, նշ. աշխ., էջ 84:

²³ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՑԻ, նշ. աշխ., էջ 133–134:

²⁴ Անդ, էջ 67–71:

2) Բառակազմական իրողություններ: Բառակազմական տեսանկյունից Օշականցու տաղերը բավականին հարուստ են վերջածանցավոր, հարադրական եւ կրկնավոր, կցական, բաղահյուսական, համադրական բարդություններով, իսկ նախածանցավոր կազմությունները համեմատական կարգով բավականին քիչ են գործածված:

ա) Վերջածանցավոր բարդությունները հիմնականում կազմված են՝ ական, արան, ալի, աուր եւ գոյն վերջածանցներով, օրինակ՝ հայկական, արարչական, ֆաւարան, արֆայարան, մարմնական, ընդունարան, լուսարան, հարիւրաուր, բիւրաուր, տենչալի, տարփալի, մեղմագոյն, վայելչագոյն, գեղեցկագոյն (Ոսկեան, էջ 78, 81, 121, 122, 157, 160, 161, 168, 169): Հազվադեպ են այլ վերջածանցներով օրինակները՝ փոքրիկ, ֆաղցրիկ, մեղմիկ, նորոգիչ, զորութիւն (Ոսկեան, էջ 95, 106, 166):

բ) Նախածանցավոր կազմությունները քիչ են՝ միայն ան ժխտական նախածանցով բառեր՝ անմամն, անբան, անհամար, անհաս, անարատ (Ոսկեան, էջ 74, 76, 80, 122), եւ չ ժխտական նախածանցով ընդամենը մեկը՝ չհանդուրժեալ (Ոսկեան, էջ 91): Այլ նախածանցներով կազմություններ չկան:

գ) Հարադրական բարդություններից հանդիպում են՝ մի առ մի, լույս տալ, ձայն տալ, կանչ առնել, զիրկ առնել, տեսության առնել (Ոսկեան, էջ 90, 108, 119, 122, 170), կրկնավորներից՝ խուժադուժ, շարաշար, ուրախ ուրախ, բեկբեկ. պէսպէս, դաստայ դաստայ, բարձրաբերձ (Ոսկեան, էջ 102, 111, 118, 119):

դ) Կցական բարդություններից կարելի է նշել՝ հօտապետ, եղբօրորդի, վարդակարմիր, այսօր, օտարաձայն, բարձրաձայն, սաղարթախիտ (Ոսկեան, էջ 74, 86, 95, 105, 111, 118, 119): Իսկական բարդություններից՝ լուսաբեր, հրաբորբոք, ֆաղցրամվագ, ծիծաղերես, սիրագումար, ֆաղցրաձայն, ծաղկափայլ (Ոսկեան, էջ 74, 85, 90, 114, 117, 127) եւ այլն:

3) Ձեւաբանական իրողություններ: Օշականցու ստեղծագործություններում աշխարհաբարի ներկայությունը հիմնականում զգալի է հատկապես հոլովական համակարգում:

Սեռական եւ տրական հոլովաձեւերը հիմնականում դրսեւորվում են ի պարզ վերջադրական հոլովիչի գերակշռմամբ, ինչպես՝ Քրիստոսի, պատվիրանի, ժամանակի, համապարհի, վարդապետի, բախտի, պատարագի (Ոսկեան, էջ 75, 108, 109, 124, 125): Մնացյալ հոլովիչների կիրառման օրինակները հազվադեպ են, ինչպես՝ հիւսիսոյ, հողմոյ, սեղանոյ, տապոյ,

մահու, ծովու, աստեղ: Ինչպես հայտնի է, ի պարզ վերջադրական հոլովի-
չի առավելությունը մյուս հոլովիչների համեմատ աշխարհաբարին բնո-
րոշ երեւոյթ է:

Բացառական հոլովը հանդես է գալիս թե՛ աշխարհաբարյան եւ թե՛
գրաբարաձեւ կազմութեամբ. աշխարհաբարին բնորոշ ից վերջավորու-
թեամբ բացառական՝ խմբից, երամից, ոտից, վեհից (Ոսկեան, էջ 81, 82),
գրաբարաձեւ հոլովում՝ ի սկզբանէ, ի հօտէ, ի հօրէ (Ոսկեան, էջ 76–79):

Երբեմն ի նախդիրն ընկնում է, եւ բացառականը հանդես է գալիս
հետեւյալ ձեւով՝ սարէն, հօտէն, եղանակէն (Ոսկեան, էջ 106–118): Ինչպես
տեսնում ենք, Օշականցու ժամանակներում ի նախդիրն այլեւս չի հա-
մարվում բացառական հոլովի կազմութեան պարտադիր բաղադրիչ:

Գործիական հոլովն իր աշխարհաբար կազմութեամբ բազում օրի-
նակներով տեղ է գտել Օշականցու ստեղծագործությունում՝ ոգւով, սի-
րով, երգով, սեղանով (Ոսկեան, էջ 113, 115) եւ այլն, իսկ գրաբարյան
գործիական ձեւերից՝ անիւ, սրտիւ, շանթիւ (Ոսկեան, էջ 113):

Միայն աշխարհաբարին հատուկ ում ձեւույթով ներգոյական հոլովի
օրինակներ մեզ չհանդիպեցին:

Աշխարհաբար կազմութեամբ հոլովական ձեւերը հանդիպում են
միայն եզակի թվով, բավականին հետաքրքրական է հոգնակիի կազմու-
թյունը, եթե Օշականցին բացառապէս գործածում է գրաբարյան Բ հոգ-
նակիակերտը, ապա Պետրոս Ղափանցու, Պաղտատար Դպիրի, Հովհան-
նես Կարնեցու տաղերում աշխարհաբարին հատուկ եւ եւ ներ հոգնա-
կիակերտ մասնիկներն օրինաչափ են, ինչպես՝ քերթեր, ջրեր, օրեր, ծերեր,
շաղեր, տաղեր, պաղեր²⁵, ծովեր, հովեր²⁶, բոցեր, վարսեր, գետեր²⁷: Այստեղ
առավել ուշադրութեան արժանի է Պետրոս Ղափանցու գործածած հոգ-
նակի սեռականի ձեւը, ինչպես՝ դաշտերուն, ձորերուն, ծառերուն²⁸, որը
լիովին համապատասխանում է արեւմտահայերենի նույն ձեւին:

4) Շարահյուսական իրողություններ: Ինչպես ցույց տվեցին օրինակ-
ները, ձեւաբանական մակարդակում Օշականցու ստեղծագործության
մեջ աշխարհաբարյան փոփոխությունները կամ տեղաշարժերն այդքան
էլ մեծ թիվ չեն կազմում, ուսումնասիրութեամբ պարզ է դառնում, որ շա-

²⁵ Ծ. ՆԱԶԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 240, 241:

²⁶ ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ, նշ. աշխ., էջ 82:

²⁷ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐՆԵՅԻ, նշ. աշխ., էջ 67, 68, 104:

²⁸ Ծ. ՆԱԶԱՐԵԱՆ, նշ. աշխ., էջ 258:

րահյուսությունը, ի տարբերություն ձեւաբանության, համեմատաբար մոտ է ժամանակի խոսակցական լեզվի շարահյուսությանը: Դրա ցայտուն օրինակն է անորոշ դերբայի գործիական հոլովով դրված ձեւի պարագայի գործածումը՝ նշալով, պարելով, դողանջելով, խնդալով, ցնծալով, ուսոստալով, թրթռալով (Ոսկեան, էջ 118) եւ այլն: Այս շարահյուսական կաղապարը բնորոշ է գրաբարին, այն վերջին դարերի ժողովրդախոսակցական ոճին պատկանող երեւույթ է:

Օշականցու տաղերը հետաքրքիր են նաեւ որոշիչ-որոշյալի շարադասության կիրառության առանձնահատկություններով: Հեղինակը գործածում է որոշիչ-որոշյալի շարադասության եւ նախագաս, եւ հետագաս օրինակներ՝ ազնի հօտապետ, կարմիր գոհար, կոկոն վարդ, բաժակ ոսկեղէն, ծառ պտղաբեր, պատկեր փաղցրիկ, ոսկեփետուր աղաւնի, գեղեցիկ Արագած, սաղարթ կանաչագեղ (Ոսկեան, էջ 74, 75, 76, 77, 90, 95, 96, 125):

Հետաքրքրական է, որ որոշիչները, ինչպես բնորոշ է գրաբարին, հետագասվելիս ո՛չ հոլովով, ո՛չ թվով չեն համաձայնում իրենց որոշյալի հետ՝ լուսով փայլակնացայտ, արուսեկի հրափայլ, յամպոյ մթագին, երգով փաղցրանուագ, անդաստանֆ ծաղկազարդ, ուստովֆ սախարթախիտ, ծառֆ անպտուղ (Ոսկեան, էջ 87, 88, 113, 115, 119, 127, 125):

Անդրադառնալով հատկացուցիչ-հատկացյալին՝ ուշադրության արժանի է հոգով սեռական հատկացուցիչի գործածությունը, ինչպես՝ լուսնիակին հոգին, վարդին թուփն (Ոսկեան, էջ 92, 94), որը նույնպես բնորոշ է արեւմտահայերենին:

Վերը նշված հնչունաբանական, բառապաշարային, բառակազմական քերականական իրողություններից զատ՝ Օշականցու տաղերը հետաքրքրական են ներկայանում նաեւ գեղարվեստական պատկերավորման միջոցներով եւ ոճաորման եղանակներով: Լեզվաոճական տեսանկյունից Օշականցու լեզուն պատկերավոր է, բարեհնչուն, հարուստ համեմատություններով եւ մակդիրներով՝ մարգարտափայլ, լուսափայլ, լուսազարդ, խանդակաթ, հրաբորբոֆ, արփիափայլ, վարդակարմիր, փաղցրանվագ, ոսկեփետուր (Ոսկեան, էջ 76, 77, 81, 83, 85, 95, 96), երբեմն էլ՝ բառաբարդման միջոցով ստեղծվում են հեղինակային նորաբանություններ, որոնք հարստացնում են գեղարվեստական խոսքը, օժտում ոճական արժեքով՝ փայլակնացայտ, իշխանաշուֆ, գոյաթափուր, դամբարազարդ, նորահնար (Ոսկեան, էջ 82, 95, 97, 112, 114):

Ըստ բանաստեղծական կառուցվածքի՝ Օշականցու տաղերը հիմնականում կազմված են հնգատող, վեցատող եւ մինչեւ տասներկու տողից բաղկացած տներից, որը հազվադեպ հանդիպող երեւույթ էր ժԹ. դարում. այդ ժամնակահատվածում ստեղծված տաղերը մեծամասամբ ունեն 1, 2 կամ 3 տողից կազմված դարձեր կամ կրկնականեր, որոնցով ամբողջանում են տները:

Հնչյունական ձեւավորման՝ հանգավորման տեսանկյունից բոլոր տաղերը հանգավորված են թույլ կամ աղքատ հանգերով: Վերջիններս կազմվում են բառավերջի շեշտված ձայնավորով. «Գաւազան ծաղկեալ ի Հօրէ...» (Ոսկեան, էջ 79), եւ բառավերջի շեշտված ձայնավորով ու դրան հաջորդող բաղաձայնով. «Գարնանային հողմոյն եկեալ...» (Ոսկեան, էջ 113):

Օշականցու ստեղծագործության մեջ մի առանձին խումբ են ներկայացնում այն տաղերը, որոնց բոլոր տողերն սկզբից մինչեւ վերջ ունեն միեւնույն վերջավորութիւնը: Նման խիստ սկզբունքով հյուսված են նաեւ Օշականցու ոտանավոր արձանագրութիւնները: Օրինակ՝

Աւետարանն իւղաբերի[ց] զսոյն կանոն կարգեալ ունի,
Յինանց թաղման զընթեռնանի, իսկ ի յաղիցս ուրոյն կարգի.
Յայլ կիւրակէս գերկուս նա մի, երից գլխոցն կանոնի
Մատթէոսեանն միայնակ մի, միշտ Յարութեան ընթեռնանի,
Զչորեսին Փոխսն Հարցի ասել լման հարկատորի.
Զի զմանկացն որ ի հնոցի, ունիմք տագնապ յայսմ աշխարհի.
Եւ Ողորմեայքն երբակի մի աւելորդ վարկանիցի,
Որովք հորհուրդ աննառելի Երրորդութեանն Բարոզի²⁹:

Իհարկե սա խոսքում է տաղասացի արվեստի վարպետության մասին, սակայն անընդհատ կրկնվող հանգերը թուլացնում են խոսքի ազդեցութիւնը՝ այն դարձնելով ինչ-որ առումով միապաղաղ:

Չնայած նույնահանգ ստեղծագործութիւնների տարածվածությանը՝ միջնադարում հետզհետեւ ավելանում են փոփոխական հանգերով ստեղծագործութիւնները, որոնք իրենց ձեւով ու բնույթով շատ ավելի տպավորիչ ու գեղեցիկ են դարձնում բանաստեղծական խոսքը: Օշականցին եւս անմասն չի մնացել եւ նրա «Տաղարան վայելուչ եւ գեղեցիկ» ժողովածուի ստեղծագործութիւնների մեծամասնութիւնը փոփոխական հանգավորմամբ է: Օրինակ՝

²⁹ Մատենադարան, ձեռ. № 7672, թերթ 53ա:

Արիք եղբարք ելցոմ այսօր
 Յայգեստան, յայգեստան,
 Անա երգէ տատրական ազնիւ
 Քաղցրաձայն, քաղցրաձայն (Ոսկեան, էջ 117):

Սակայն փոփոխական հանգերով տաղերում հանգափոխությունը երբեմն կատարվում է անկանոն եղանակով: Օրինակ՝

Ի յատենի թագաւորին
 Մինչ կացուցեալ տագնապիս՝ աւաղ
 Երամք սրբոցն աստեղափայլ
 Զարդարին, զարդարին, զարդարին:
 Դատօղն արդար ի յակնարկելն
 Ի դէմս քո ամաչիս՝ աւաղ (Ոսկեան, էջ 101):

Այսպիսով՝ Գրիգոր Օշականցին միջնադարյան այն հեղինակներից է, որոնք մեզ ներկայանում են, իրենց ժամանակաշրջանի չափանիշներով, արժեքավոր տաղերով, որոնք աչքի են ընկնում իրենց նրբություններ, գեղարվեստական պատկերների կենդանի, խոսուն նկարագրությամբ, հարուստ ու հագեցած բառապաշարով: Նրա բանաստեղծական խոսքը պարզ ու ընկալելի է, բարբառային եւ օտար բառերի առկայությունն աննշան է, բառաձեւերը, քերականական կառույցները մեծ մասամբ գրաբարյան են, սակայն աշխարհաբարի ներկայությունը եւս նկատելի է՝ հատկապես հոլովական համակարգում: Պետք է փաստենք, որ Գրիգոր Օշականցին, ի տարբերություն Պետրոս Ղափանցու, Պաղտատար Դպիրի եւ Հովհաննես Կարնեցու, առավել զուսպ եւ ավանդապահ է՝ առավելագույնս հարազատ գրաբարին:

Ինչ խոսք, այս եւ այլ ստեղծագործություններում տեղ գտած գրաբարյան եւ աշխարհաբարյան լեզվաոճական իրողությունները ենթահոդ պատրաստեցին հետագայում աշխարհաբարի երկու ճյուղերի ձեւավորման՝ հատկապես արեւմտահայերենի լեզվաքերականական բաղադրիչների հիմնավորման համար:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Տաղ, տաղաչափություն, հանգ, հանգափոխություն, փոփոխական հանգ:

РЕЗЮМЕ

Архиепископ Григор Ошаканци — восточноармянский поэт XVIII века. Его произведения и рукописи были собраны Ованнесом Карнеци. Основная тема Григора Ошаканци — восхваление и прославление родной природы с реалистичным, объективным, простым и доступным описанием.

Основная лексика произведений Ошаканци — древнеармянская. Помимо исконно армянской лексики, переданной через грабар, Ошаканци использует ряд реалий, характерных для грамматики этого языка. Ошаканци также использует ряд заимствованных слов из сирийского(арамейского), греческого, иврита, пехлевийского и персидского языков.

Он один из тех авторов Средневековья, который представляется нам ценными по меркам своего времени стихами, отличающимися тонкостью, живым, красноречивым описанием художественных образов, богатым и полным словарным запасом.

Грабарские (классический армянский язык) и ашхарабарские (новый армянский язык) грамматико-лексические и стилистические реалии, обнаруженные в творчестве Григора Ошаканци, подготовили почву для формирования двух ветвей ашхарабарского армянского, особенно для языковых компонентов западноармянского языка.

SUMMARY

Archbishop Grigor Oshakantsi was an 18th century Eastern Armenian poet. His works and manuscripts were collected by Hovhannes Karnetsi. The main theme of Grigor Oshakantsi is the praise and glorification of native nature in objective, simple and comprehensible description.

The basic vocabulary of Oshakantsi's works belongs to the Classical Armenian language. In addition to the native Armenian vocabulary conveyed through the Classical Armenian, Oshakantsi uses a number of facts characteristic of the grammar of the Classical Armenian. Oshakantsi also uses a number of loanwords from Assyrian, Greek, Hebrew, Pahlavi and Persian.

He is one of those medieval authors who present valuable poems by the standards of their time, characterized by subtlety, vivid, eloquent description of artistic images and rich vocabulary.

The linguistic and stylistic realities of the Classical Armenian and Modern Armenian languages found in the works of Grigor Oshakantsi prepared subsoil for the formation of two branches of the Modern Armenian language, especially for the substantiation of the linguistic components of the Western Armenian.

